

Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ՍԿԻՉԲՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՁՈՒԻ ԵՒ ԴԻՈՆԵՍՒՈՍԻ ԹՐԱԿԱՑԻՈՑ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայկական դպրութեան ճոխ մաս մ'ալ կը գրաւեն ֆերականք, որոց պաշտօնն էր կամ պիտի ըլլար հսկել լեզուին յստակութեան վրայ և սրբել զայն յօտար տարերաց, որք կրնային փրկապետել լեզուին վրայ և ազաւղել զայն: Եւ յիրաւի, կը տեսնենք ակն յայտնի որ հազիւ թէ Ս. Սահակ ձևացուց հայ բարբառը՝ ելան անմիջապէս անոր հակառակ այնպիսի գրիչներ ալ որք սկսան զայն այլափոխել: Այլափոխել ըսինք, ըստ մեր արդի տեսութեան, և բաղդատելով զրնտիր մատենագիրս ընդ այդ անուանեալ ազաւղ դասուն: Սակայն կրնանք արդեօք կարծել որ առային ուսանողքն 'ի դպրոցս Ս. Սահակայ՝ այնչափ մտցած ըլլան իրենց լեզուին արմատական շէնքն ու հիմն, մինչև խճողել զայն ինքնահնար բառերով ու մասնիկներով, որոնց ամենքն ալ փոխ անտուած ըլլան 'ի յոյն լեզուէ: Զայս յախուռն դատաստան մենք չենք կրնար առ ժամս հաստատել, մինչև կարենանք ցուցընել հաւաստի քննութեամբք, որ այդ նոյն

խիկ մեր կոչած աղաւաղ դասուն թարգմանիչք ունեցեր են իրենց հիմնական դրութիւնը բուն ազգին բարբառոյն մէջ, թերևս նաև մեր դպրութեան նախահարց Սահակայ և Մեսրոպայ գաղափարն նոյնն եղած ըլլայ, թէպէտ ոչ 'ի գործ եղեալ ճնիկ իրենց ճաշակովը:

Եթէ մէկ մը դարձունենք աշուրնիս հայկական դպրութեան արդի շրջանին վրայ, ամենևին նորոգինակ տեսարան մը կը բացուի մեր առջև. այնպիսի տեսարան՝ զոր և ոչ մի բարբառ՝ ոչ արևելեան և ոչ արևմտեան, ցայժմ հանդիսացուցեր է յայխարհիս. բարբառ մը՝ որուն հեղինակ կը կարծուի իւրաքանչիւր մատենագիր, և ոչ մէկ լեզուի մը կանոնաց հպատակ. շերեիր դպրոց մը, ոչ ակադեմիա մը, ոչ սր և իցէ ուսումնական կեդրոն մը՝ ուսկից կախումն ունենայ բարբառոյն հեղինակութիւնն. ոչ ընկերութիւն մը գիտնոց՝ որ անոնց մատարական ուժովն ազգին վրայ ազդեցութիւն ըրած ըլլայ, Միւս կողմանէ գրողք և թարգմանողք անպակաս, ըստ քմաց իւր

րեանց։ Այս ընթացքով ինչ յուսալի էր լեզուէ մը, բայց խառնակութիւն մը, չար ու բարի։ Եւ այս շատ հեռու չէ թերևս մեր այժմու գաղափարներէ, երբ կը տատանինք դեռ ընդ մէջ բամբակ-օրէն և գրաբառ խօսից, թերևս երկուքին մէջ ալ թերակատար ըլլալով, թողով մէկդի բարձրագոյն իմաստներն և ընտիր գրութիւնքն, ինչ է ներկայ՝ նաև միայն բառերու և անուանց գրութեան մէջ այդչափ իրարմէ զանազանին. որ լեզու, հին կամ նոր, այդպիսի խառնընդոր անդունդ մը կը ներկայացընէ մեզ։ Արդ գիտմամբ ձեռք առինք մենք հիմայ հայ քերականներն, որոնց հեղինակութեան վրայ յեցեալ կ'ուզենք համառօտիւ, որչափ կրնանք, ներկայացնել ընթերցողաց հայկական լեզուին կազմութեան աւանդներն. գորս թերևս շատերն ցարդ խօսից նիւթ առած էին մաս մաս առանձին, այլ մեր Զանգն պիտի ըլլայ այս տեղ նախնեաց օրինակներով մեր կարծիքը զօրացնել։ Եւ կարծենք որ քան զայս զգուշաւոր և ապահովագոյն ճամբայ չկայ, տեսնել թէ ինչ մտածեր ու գրեր են մեզմէ առաջ այնչափ քննադատ քերականներ, և զորոնք մենք հիմայ մուսթած կ'ուզենք նոր նոր կանոններ մեզի սահմանել, ոմն գերմանական, ոմն զաղղիական փայլերով։ Արով ուրիշ բան չըլլար մեր գիտումն, բայց եթէ նախնեաց մեզ աւանդած հեղինակութիւնը մեզի իբր դպրոց կանգնելով, կարծեալ աւելի գիւրագոյն ճամբայ բանալ Զանաւէր բանասիրաց։ Վասն զի ոչ որ, կարծենք, այնչափ յանդգնի՝ որ կարենայ մխրը դնել թէ ինքն լեզուի մը օրէնսդիր ըլլայ, յետ այնչափ աշխատողաց՝ որ տասնուհինգ դար այդ լեզուի վրայ աշխատեր և գրեր են։

Ներքն մեզի ընթերցողք, եթէ քիչ մը աւելի հիններէն առնունք մեր խօսից սկիզբն, որպէս զի գիւրաւ տեսնենք ժամանակաց շարքը։

չալուժեամբ դատաստան մը միայն վճռելու, թէ արգեթք յառաջ քան զՄ. Սահակ և զՍ. Մեսրոպ հայկական բարբառ և դիր կար՝ թէ ոչ։ Մեր պատմագրոց և ազգային աւանդութեան ետեէ երթալով, կրնանք կարծել ու հաւատալ թէ մեր Հայկազուն թագաւորքն իսկ ունեցած էին իրենց մասնաւոր լեզուն, որ է մեր հայկական բարբառն, և միանգամայն անոր յայտարար նշան ներն՝ որ են տառք և նշանագիրք, և անոնցմով գրեր ու խօսեր են։ Բայց եթէ մէկն հարցընէ թէ ո՞ր են հիմայ այդչափ թագաւորաց և պատմութեց յիշատակարաններն, զոր կ'երևակայենք մտքով, հարկաւ կը պապանձինք և չենք կարող պատասխան մը տալ հաստատուն՝ կամ ոչոք կամ ոչ։ Սակայն ցայտօր եղած դիւանքն կը բռնադատեն զմեզ աւելի ոչ ըսելու քան թէ այդ վասն զի եթէ եղած ըլլար այնպիսի բարբառոտ ժամանակ մը, զոր մեր պատմութիւնն կ'աւանդէ, կը մընար գոնէ նշխար մը, գրամ մը, քարի կտոր մը, անօթ մը, և այլն, և այլն, որուն վրայ այդ հրաշալի նշանագիրքերն զրոյմած ըլլային։ Բայց միթէ այդպիսի զրամներ չեն գտնուած։ Մեր արժանահաւատ պատմիչն Վարդան այն խընդիրը մէջ առնելով կ'ըսէ. «Եւ զի լեալ է հայերէն գիր հոյն» վկայեցաւ ՚ի ժամանակս Ղևոնի արքայի, զի գտաւ գրամ ՚ի կիլիկիա, հայերէն գրով գրոյմեալ զանուն կուսպաշտ թագաւորացն Հայկազանց. զորոյ զթերութիւնն ելից նորս մեր եզրոս, աստուածախառն շնորհք լցեալ» 1 :

Իսկ զայս հաւաստի ծանօթութիւն չէր կրնար տրուիլ։ Բայց մեր է այդպիսի գրամ մը։ Միւնէ և ցայտօր չգտնուելուն պատճառաւ դեռ այդպիսի գրամ մը՝ եթէ ոչ Հայկազանց գոնէ Արշակունեաց ժամանակ, տարակուսական կ'ըլլայ Վարդան վարդապետին վկայութիւնն, և համարձակ ալ ըսել սխալ։

Շատ անգամ խօսից նիւթ եղած է, և մեծ գիտողութիւն համարուած, դու...

1 Վարդանայ Պատմութիւն. էջ 80. (տպ. 1862. ՚ի Ս. Ղազար)։

Թերևս ուրիշ տեսակ գիր մը հայերէնի հետ շփոթելով: Ասոր նման վկայութիւն մ'ալ, բայց բոլորովին առասպելական կնիքով, մէջ կը բերէ արտաքին յոյն պատմիչ մը, այն փիլոսոփաաւան՝ որ գրած է և ստայողած Ապողոնիոսի Տիանեցոյ պատմութիւնն և արմնեւ լիքն՝ նոյն գրոց մէջ կ'աւանդէ թէ Արշակ թագաւորին ժամանակ ինձ մը գտնուեցաւ, որուն վզին մանեակ մը գրուած էր ոսկի, և վրան գրուած. Βασίλειος Ἀρσάκης Θέω Νισαίω, և թէ ինչ գրերով էր, կ'ըսէ. Ἀρμενίαις γράμμασι (հայկական նշանագրոց), և այս գրութեանցաւ կամ ըմբռնեցաւ 'ի խնկարելուն Պաւսիսիս, ինչպէս կ'ըսէ հեղինակն. և ետքը կը յաւելու. « Յայնժամ թագաւոր էր Հայոց Արշակ. և կարծեմ եթէ տեսեալ նորա զինձն, նուիրեաց Դիոնիսեայ՝ վասն մեծութեան գազանին՝ 1, կրնայ ըլլալ որ փիլոսոփաաւանս իր այնչափ շփոթութեանց հետ այս ալ շփոթած ըլլայ, կամ Ἀρμένιος (Հայ) անունով ուրիշ գիր և ազգ իմացած ըլլայ, բայց օտար չէ ընդունելն թէ կար հայկական լեզուն, թէպէտ զուրկ 'ի նշանագրաց կամ անգործածական տառերով. և այս բուն հայկական բարբառոյն օրինակ մ'ունիք վարրոն հռովմայեցի մատենագրին լեզուարանական գրութեան մէջ, ուր կը խօսի լատին լեզուի բառերուն կազմութեանը վրայ: Յետ խօսելու և յիշելու ասորի և ուրիշ լեզուները, տեղ մ'ալ կը յիշէ հայ լեզուն՝ Տիգրիս բառին մեկնութիւնը տարով, և կ'ըսէ. « Վաղը (լատին բառն Tigris), որ է իբրև առիւծ խայտաբղէտ, որ չէ և ուրիշ ըմբռնեալ կենդանւոյն, է բառ հայեցի. քանզի անդ և տեղ և գետն որ ուժգնագոյն արշաւէ, կոչի Tigris 2 »:

Ուստի այսչափս միայն կրնանք ըսել, թէ առանց տառից՝ հայկական լեզու մը կը խօսուէր 'ի Հայաստան, մինչև ըզնոյնն զբերու վրայ առին մեր երկու նախահարքն դպրութեանս՝ Ս. Սահակ և Մեսրոպ, իրենց երկարատև աշխատութեամբն, Եւ եթէ այս ալ չխոստովանինք, ապա հարկ կ'ըլլայ ընդունել ուրիշ անտեղի կարծիք մը, թէ երկու սուրբերն՝ գրոց հետ հնարեցին նաև լեզու մ'ալ, ու տուին Հայ ազգին լեզու և բառեր նոր և անյուր: Եւ յիրաւի ամենայն պատմագիրք կը վկայեն լեզուին գոյութեանը, և միայն տառից պակասութիւնը կը յիշատակեն:

Արդ, ինչպէս որ կ'ուզէ հաւատայ մէկն, մեկք. ոչ զոք մինչև այս տեղս կրնանք զօրաւորագոյն փաստերով յաղթահարել. բայց սակէ վերջ ըսելիք պատմութիւնն նոյն իսկ մինչև ցարդ գործուած հեղինակութեան վրայ հաստատեալ է, և ոչ ինքնահնար կարծիք մը:

Մեծ պարծանք մը պահուած էր Հայաստանի եկեղեցական դասուն, ըլլալ գիտութեան լուսաւորիչք և ծագողք 'ի սիրգրն հինգերորդ դարուն, որ ապա նոյն անձանց մտաւորական երկասիրութեանցն պատճառաւ կոչուեցաւ Սսկիդէն դար: Գիտութեան կարօտութիւն մը նախ սկսաւ զգալ այն խումբն՝ որ իրեն պաշտամամբը չէր կրնար հաղորդել ժողովրդեան սրբազան գրեանց իմաստները, և ժողովուրդն առանց օգտուելու կ'երթար կու գար առ իւր հովիւն: Այս իրաւացի պակասութիւնն և կարօտութիւնն ստիպեցին զՍ. Մեսրոպ, զՍ. Սահակ և զՂաւմակաբուհ թագաւոր՝ հոգալու այսպիսի կարևոր՝ բայց միանգամայն դժուարին ձեռնարկ մը յաջողցնելու: Եթէ աստուածային հրաշք, ինչպէս կը պատմեն մեր պատմագիրք, եթէ մարդկային ճարտարութիւն 'ի միասին զուգեալ՝ ստեղծեցին հայկական այբուբենն, իրենց ձեւերոյն և ձևագամանկներոյն, կը մնար միայն ուրիշ ճարտարագոյն զրչի և մտաց զայն կարգաւ:

1 Փիլոսոփաաւանս, (տպ. 1608). էջ 86.
 2 Tigris, qui est ut leo varius, qui vivus capi adhuc non potuit, vocabulum è lingua Armenica, nam ibi et sagitta, et quod vehementissimum flumen, dicitur Tigris. Varr. de Ling. lat. libr. IV.

րել և տալ իրեն սեպհական ազգային հնչումները: Եւ այն ազգն որ մինչև ցայնժամ ասորի լեզուով կ'ապրէր, և բոլոր գիտունք զայն սովորած էին, այս հրաշալի գիւտս դարձուց զինքն յանկարծ 'ի յունականն, մինչև գրերն ձևաորիչքն իսկ Յոյնք կ'ըլլային, և հարկ կ'ըլլար որ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ 'ի Յոյնս գիմէին՝ օգնութիւն գրտնելու. բայց թէ որչափ օգտուեցան աւնոցմէ կամ որչափ անօգուտ աշխատեցան անոնց հետ՝ չենք կրնար ըսել, այդ մասը լռութեամբ և խաւարաւ քողարկեալ է: Իրաւ որ ոչ կարևորութիւն մը կ'ենթադրենք գիտնալու թէ հայերէն լեզուի մայրն և քորքն ինչ լեզուներ եղած են, սակայն այս ոգին կ'երևայ առ ամենայն գիտունս Հայոց նոյն դարոն և ապագային, որ աւելի առ յունականն կ'ուզեն մերձաւորիլ քան յասորին: Ահա Ս. Սահակ կ'առնու ձեռք զհայ և զհոռոմ գրերն և գիմացէ զիմաց շարիւղով կը ձևացունէ հայ գրոց դասաւորութիւնը, որ մեզի երկրորդ դուռ մ'ալ կը բանայ մթութեան: Ինչպէս որ ալ ուզենայ մէկն հնչել հայ գրերն, հարկ է զայս խոստովանիլ անհրաժեշտ, որ Ս. Սահակ կամուս և ակամայ քաշեր միացուցեր է հայ գրերը ըստ դասաւորութեան յունին, և ամենեկին չի զօրեր այն կարծիքն՝ թէ հիմայ մենք կորսնցուցած ենք մեր տառից հնչմունքը. և թէ ինչ որ հիմայ մենք կը հեղենք՝ անոր հակառակը կը հեղէին Ս. Սահակ և Ս. Մեսրոպ և իւր յաջորդքն: Վասն զի եթէ գործնականապէս կորսնցուցած ալ համարիմք բոլորովին, սակայն ոչ նոյնպէս և տեսականապէս. որովհետև մեր հին քերականքն յայտնապէս կը դասաւորեն հայկական փափուկ և խոշոր հնչումները, զոր յետոյ կրնանք մենք ալ բացայայտել:

Արդ ըստ ամենայն պատմեաց մերոց և նոյն իսկ Բալուայ գրոյն գիւտին հեղինակին՝ Ս. Սահակին առաջին գործն

եղաւ հայ գրերն յունին գիմաց կարգաւորել, հետեւեալ ոճով.

α, ա.	ν, ն.
β, բ.	ξ, —
γ, գ.	ο, ո.
δ, դ.	π, պ.
ε, ե.	ρ, ռ, ը.
ζ, շ.	σ, ս.
η, է.	τ, տ.
θ, թ.	υ, (իւ).
ι, ի.	φ, փ.
κ, կ.	χ, ք.
λ, լ, Ղ.	ψ, —
μ, մ.	ω, (ով):

Այս է մեր այժմու Տառադարձութիւն կոչածն, կամ ֆոխանակութիւն տառից:

Սակայն արդեաց ոմանք կարծիքն այս տառադարձութեան նկատմամբ, բոլոր տարբեր ոճով կ'ընթանան և կ'ուզեն մեկնել այդ գրոց փոխանակութիւնը: Եւ կ'ըսեն, թէ ըստ նախնեաց թ' կը հնչուէր պ, դ' կը հնչուէր տ, և այլն. միով բանիւ, բոլորովին հակառակ մեր արդի հնչման: Բայց մեզի կ'երևայ որ այդպիսի կարծիք մը հաստատելու ուրիշ պատճառ մը չունին անոնք, բայց եթէ այն իրաւացի տեսութիւնը, թէ ինչ անհետեանք և հակառակ բան մ'է՛ պլոց լեզուաց բառերն ու անուանքը միշտ փոփոխել, փափուկներն թանձրացնել և թանձրներն փափկացնել: Այս արդարացի փաստը որչափ ալ զօրաւոր է, սակայն ոչ որ ցարդ օրինակ մը 'ի նախնեաց կրցեր է մէջ բերել. իսկ ընդ հակառակն բոլոր քերականք մեր կողմն են և բոլոր պատմագիրք. և ալ անժխտելի օրինակն՝ որ հիմայ իսկ ինչպէս կ'արտաբերէ հայ կոկորդ մը օտարագզի բառերն, արդեօք առանց իսկ այդ կանոնը գիտնալու՝ շարունակ

պատմութիւն մը, յորում քիչ մը տարբեր ոճով կը պատմուի Հայկական գրոց գիւտն, և որ թերևս Վարդան պատմչին գործն ըլլայ:

1 Բալուայ գիւտ Գրոց ըստածն է փոքր

չի փոխանակեր գիր գրի . թող փորձա-
 ուրք և փորձք վկայեն : Եւ որովհետեւ
 նոյն ազգի և նոյն ժողովրդեան ճետք
 էին այդ մեր յարմարողք լեզուիս , բնա-
 կան էր որ ինչպէս կը հնչէր այն ժա-
 մանակ Ս . Սահակ հռոմ բառերն և
 գրերն՝ նոյն ձևը տար և կարգաւորու-
 թիւնը , որով կ'ունենայինք և ունե-
 ցանք իսկ այդ խոտոր և գէժ ընդդէմ
 գրերն . որ թէպէտ արտաքին տեսու-
 թեամբ հակառակ երևի՝ սակայն յար-
 դիւնս միշտ ապացուցեալ է : Ուստի
 ասոր համար , ըստ նախնեաց աւան-
 դից , չենք կրնար մտածել որ Պրառնոն
 գրածն Ս . Սահակ կարեւորացած ըլլայ
 փշագոն , և ոչ զԳրիգորիոսն՝ Ղրիգո-
 րիոս (կամ Կրիկորիոս) , և այլն : Ասոր
 ուրիշ ապացոյց մ'ալ ունինք ՚ի նախ-
 նեաց , և այն բուն հիներէն . վասն զի
 կան նաև դաս մ'ալ գրչաց կամ մա-
 տենագիրք սմանք , որ չեն հպատակիր
 այդ կանոնաց և դասաւորութեան . և
 ահա անոնք փոխանակութեան կանոնը
 այսպէս կ'ընեն .

- α , ա .
- β , վ , պ .
- γ , Ղ .
- δ , տ .
- ε , ե .
- η , է .
- θ , թ .
- κ , ք .
- λ , լ .
- π , փ .
- τ , թ .
- φ , ֆ (՚ի վերջինս) , փ .
- χ , խ .

Այսպէս կ'ըսեն՝ Աղաթոն (Ագա-
 թոն) , Վեոիա (Իբերիա) , Էքպատանք
 (Εκβάτανα) , Ալիպիադ (Αλιπιάδο) :
 Ուրեմն այս երկու դասէն որն պէտք
 է համարինք ազգային հնչումս . — հար-
 կալ գաւառիկն : Եւ որպէս զի տեղացի
 հնչումս չունենալնուս պատճառաւ չմե-
 ղադրուինք , ահա ՚ի խոր Հայաստանէն
 իմաստուն մը մեզ օրինակ բերենք , ու

րուն հարկաւ ազգային հնչումս ունե-
 նալուն ոչ դը կը տարակուսի . աւել-
 ցընենք միանգամայն որ ժամանակին
 ամենէն դիտարկան և համարուեալ
 անձն էր ՚ի Հայս և ՚ի Յոյնս . այս է
 բաղում անգամ յիշուած Գրիգոր Մա-
 գիստրոս : Արդ այս մատենագիրս զբա-
 դածայն տառս կը բաժնէ յերիս դասս ,
 և կը կոչէ նուրբ , ստուար և միջակ .
 α և են նուրբն տասն , և ստուարք ինն ,
 և միջակք եօթն . և միջակք ասին , զի
 քան զնուրբն յոյրք են , և քան զյոյրն՝
 նուրբք . և միջակքն եօթն , ՚ի մէջ բա-
 րակայն և յոյրիցն . բ , գ , դ , ձ , ղ , ճ ,
 ժ . և թաւք (յոյր) ինն . թ , փ , ք , խ ,
 լ , շ , ջ , ո , ց . և լերկք տասն . պ , կ ,
 տ , զ , ն , ծ , շ , մ , ս , ր : Եւ են բարակքն ,
 բեն ՚ի մէջ մենի , պէի և փւրբի . վասն
 զի քան զվեն և զպէ իսժ է , և քան
 զփիւր բարակ . և գիմ ՚ի մէջ կէնի , քէի
 և խէի , զի քան զկէն թաւ է , և քան
 զքէ և զխէ՝ լերկ . և դայն ՚ի մէջ տիւնի
 և թոյի , վասն զի քան զտիւն թաւ է ,
 և քան զթոյն՝ լերկ . . . » : Այսպէս
 կ'ըմբռնէ Գրիգոր Մագիստրոս՝ մեր
 տառից մէջ եղած զանազանութիւնն ,
 և ոչ ըստ ոմանց մեկնութեան՝ տա-
 պալելով այդ գրոց դասաւորութիւնը ,
 զոր Ս . Սահակ բնական իր հնչմամբը
 շարադրեր է : Բայց որպէս զի ըսածնիս
 աւելի ստուգուի , դեննք այդ Գրիգո-
 րեան մեկնութեան առջև Դիոնիսեան
 քերականութեան կարգն ալ : Ինչպէս
 Գրիգոր Մագիստրոս , նոյնպէս այդ քե-
 րականին թարգմանն կը բաժնէ զտառս
 ՚ի միջակք եօթն , ՚ի թաւս՝ ինն , և ՚ի
 լերկս՝ տասն , և նոյն դասաւորութիւնն
 կ'ընդունին մեր նախնիք , ինչ որ մենք
 այսօր : Թերիս այլը ըսեն մեզի՝ թէ
 հնչումսիդ կորսնցուցեր էք : Եթէ այդ-
 պէս ալ համարինք , սակայն կը հաս-
 կընանք և կը մեկնենք Ս . Սահակայ
 դրած կանոնը , որուն կը վկայեն խորե-
 նային , Կորիւն և Ղազար , որոնք միա-
 բան և նոյն բառերով կ'ըսեն . « փոխա-
 դրելով զհայերէն աթուրթայան ըստ-
 անասյթաբութեան սիւղաբայիցն ՚ի հեռ-
 լենացոյն » . իսկ Բալուայ գիւտին

պատմին ակ յայտնի կ'ըսէ թէ, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ յոյն գրերու թարգմաններ են զհայկական տառս, աւելցընելով պակաս եղածները: Աւելորդ է յիշեցընել ընթերցողաց որ մեր Միջին դարեան լեզուի մատենագիրք որչափ այլանդակ և խառնաբնոր գրութիւններ հնարեցին հայկական անուանց. և անշուշտ չըսեր մէկն անոնց համար ալ թէ հանդերձ այն սխալագրութեամբ ուղիղ կը հնչէին:

Բայց այդ Սահակեան կամ Մեսրոպեան կարգաւորութիւնը, որչափ ալ ընդհանուր կանոնն և դատաստանն չի կրնար մերժել, սակայն ամեն ժամանակ մասնական վէճեր ելած են այս կամ այդ գրերու համար. և որչափ ալ մանր քննադատութեան նիւթեր են, կարևոր է թերևս համառօտիւ զայն ալ ըսել. վասն զի կամաց կամաց հայկական լեզուի գիտութեան ասպարէզն ընդարձակելով, ոչ միայն մեր բնիկ ազգին մէջ, այլ նաև յերոպպոսի գիտնականս, կրնայ ըլլալ որ արտաքին ծածոթութեանց հետ սպորդին նաև այնպիսի վրիպակներ, որոնց փասան յետ ժամանակաց աւելի զգալի ըլլայ՝ արմատանալով հասարակաց մտքին մէջ: Նիւթ մըն ալ, զոր ուրիշ անգամ առած են 'ի քննութիւն հանդերձ ուսումնական պոյքարով, է լ և զ գրերուն խընդիրը, զոր գործածութիւնը սկսաւ տարածել յազգին, իրաւամբ կամ յանիրաւի, երբեմն նաև ըստ ոչ կամաց փաստաբանից և դատախաղից: Այդ խնդիրն որչափ ալ նոր գիւտ ուղած են ներկայացնել, սակայն մենք կը տեսնենք որ շատ հին վէճ եղած պիտի ըլլայ յազգիս և մանաւանդ 'ի քերականս. յորոց ոմանք դաղափարելու ժամանակ իրենց նախորդաց քերականութիւնը՝ յայտնապէս կ'ըսեն, թէ քանի մը զլուս բան մթին և անորոշ և սխալ ըլլալով՝ դուրս թողուցին: Իսկ այլը կարծելով հաստատել զայն՝ ուղեցին մերժել բոլորովին իբրև անգոյ ինչ Տառադարձութեան վերոյիշեալ կարգն, առարկելով միանգամայն թէ ոչ

ամենայն գիր գիւր համապատասխան գտած է. օրինակ իմն թնչ գիր պիտի կրնանք հանդիպցնել յոյն է տառին, որուն ըստ մեր կարգի պիտի հանդիպի շ հայ գիրն, և թէ յետ ք տառին մինչև ռ տառն կարգն չիօթած է: Իսկ զտառն համար ըսին թէ այդ շ գիրն է և փշիկը կարծեցնել տուեր է թէ բուն զտառն ըլլայ: Բայց թերևս աւելորդ բան էր այդպիսի ակնյայտնի բան մը մերժել; շ տառը հաստատելու համար. վասն զի այդ երկրորդական առարկութիւններն դիւրաւ կը լուծուին. օրինակ իմն է յոյն տառն, ինչպէս նաև փ կրկնակ տառ ըլլալով՝ անկարելի էր մեր ուր և իցէ գրոյն համաձայնեցնել, այլ կրկին տառի, ինչպէս որ ալ եղած է քս, կս, կամ փս և քս: Բայց կարգի խառնաբնորութիւնն ալ մեզի չեքեկիր ուղեբերու գրերու միջոց. միայն բնական խելքն կը սովորեցընէ որ փոխանակ այն գրերուն զոր մենք ունէինք և յոյներն չունէին, Ս. Սահակ չէր կրնար Յունաց ալ նոր գիր ստեղծել. և ահա այդ կտորին չիօթութիւնն

- ւ, ի
- լ
- խ
- ժ
- ա, կ
- հ
- ձ
- լ, ղ
- ճ -
- մ, մ'
- յ -
- ն, ն
- է, շ
- օ, ո

ուր մեր լեզուն ունի տասնուչորս գիր, և յոյնն ընդ հակառակն եօթն միայն. ինչպէս կրնար Ս. Սահակ ուրիշ կերպով դասաւորել. անկարելին կա-

բելի չէր կրնար ընել որչափ ալ գիտնական և մտացի ըլլար: Ուրեմն գիր գիր ձգելով՝ բնական կարգով կը տեսնենք յոյն լամբլտայի դիմաց հայերէն դասու, որ ըստ այլոց պիտի կարծենք ազգային ընդհանուր վրիպակ մը, որ որդուց որդի չեն կրցած իմանալ մեր քրանանորջ գաղափարողը, և ոչ Գէորդ անուանի և գիտուն օրինակողն աստուածաշնչի. և այնչափ կաշկանդուեր են մեր սրբազան երիցունքն՝ որ չեն տեսած թէ յեկեղեցւոյ Ղուկաս կարգալու է եղեր, և եթէ ամեն օրինակներ և օրինակողքն սխալ են: Արդեօք ազգին մէջէն մէկը լսած չէր այդ սուրբ Գրոց ամենածանօթ անուանըը, չորեքօրեայ Ղազարն. արդեօք չէր գիտեր 'ի 902 թուականին Գրիստոսի՝ Մլէք թագուհւոյն համար զնոր կտակն օրինակողն, որ և ոչ փչիլի դաղափար օնեցեր է, այլ համարձակ երբեմն ղ, երբեմն ի կը դնէ: Մենք կրնայինք իրարցընէ վրիպակ ալ համարել եթէ միայն այն տառադարձութեան կանոնին մէջ հանդիպէինք այդ անսեղութեանը. սակայն կը տեսնենք որ բուն իսկ հայ լեզուի մէջ մտած բան մ'էր, որուն անթիւ օրինակներ անպակաս են 'ի նախնին. և ինքն իսկ Մագիստրոս տեղ մը լծորդ կ'ընէ զզատ գիրն մեր ընդ նուրի և բէի. ինչ անկարելութիւն եթէ յիւնի հետ ալ համարուի, մինչդեռ կ'ըսէ. « իսկ զի զատի զլլտով է սահմանած, զի լծակից է լիունի. և յայլոց ազգաց լեզուս նօսը է լիունն. և զոր մեք զատով՝ Ղուկաս, Ղազար ասեմք, նոքա Ղուկաս, Ղազար, այսպէս և զայլսն նմանապէս »: Ուրիշ տեղ մըն ալ կը յաւելու Արիտակէս գրիւն. « Եւ զի զատը լծորդ է լիւնիդ, հերիք համարեցան սուրբ թարգմանիչքն զատի զլլտով գծագրել, և ոչ մերով թանձր լիւնիւն. որպէս էլի էլի, և ոչ էլի էլի. զի այս թանձր է և յախնթոր. այլ և 'ի յլլովութենէ զրոյ խոյս կամեցան տալ, վասն այնր՝ սմին որիչ գիր չասհմանեցին. որպէս և ոչ աւ մեծ, այլ յանուանն ռիւ և

վնով, և 'ի բայն՝ այբիւ և շինիւ »: Բայց այս կարծիքն ալ կայ 'ի քերականս մեր, թէ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ չեն կրցած ինչպէս որ պէտք էր՝ կարգաւորել այդ գրերն և բուն հայերէն լեզուն՝, որով հետևողք և յաջորդք անի զեզման՝ չունենալով իրենց հաստատուն հիմն:

Որչափ ալ մեզի համար մտթ է հայկական լեզուի նախնական ձևն և Ս. Սահակով և Մեսրոպաւ եղած այդ փոփոխութեան պատմութիւնն, սակայն ոչ նոյնպիսի վիճակ մը կը ներկայացընեն մեզի հետևեալ շարունակողք: Թէպէտ չենք կրնար վճռաբար գատել և որոշել թէ ո՞ր մասն 'ի Ս. Գիրո 'ի հին և 'ի նոր կտակին՝ Ս. Սահակայ լեզուին և գրչին երկասիրութիւնն ըլլայ, գոնէ առ այժմս, սակայն յայտնի կը տեսնուի բովանդակ թարգմանչաց դասուն վրայ մեծ կորովութիւն մը և ճարտարութիւն լեզուի, քանկութիւն և ողորկութիւն, միով բանիւ այն ամենայն գեղեցիկ կատարելութիւնքն, զոր կը ներկայացընեն մեզի յոյն և լատին գրիչք: Այն թարգմանիչքն որոնք նաև արտաքին ուսմանց ծանօթութեամբ

1 Որովհետև երկար վիճման նիւթ համարեալ է այդ խնդիրն, և աւելի դիւրագայն որ ըստ այժմու գրութեան սովորուի չգրել օտարազգի անուանըը. սակայն այսու նախնեաց կանոնը և գործածը սխալ չենք կրնար համարել: Բայց այս փորձիկ խնդիրն միայն կ'ընենք, թէ արդեօք ներքին է բուն հայացի անուանըը որ անսով գրուած են՝ 'ի չփոխել. օրինակ իմն զԱսոլիկ, Asoligh, և այլն: Այս ալ զարմանալի է որ 'ի 1886 թուին գերմանացի լեզուագէտ մը (M. Bötticher) յոյն լեզուի եղերեղորիս (élégie, ἐλεγία) բառին ստուգաբանութիւնը կ'ուզէ գտնել հայերէն եղեգն բառին մէջ, որ կը նշանակէ, կ'ըսէ, եղէդն կամ սրինք. և քան զայս բունգաստ ինչ մեկնութիւն կրնայ ըլլալ, որչափ ալ հաւանական համարինք չ և զգրիբուն լծորդութիւնը կրնան յանրաւ երթալ այսպիսի բնագորս ստուգաբանութիւններ, որոնց հիմն խիտ խախտու է, և շատ անգամ ալ տղայական խաղալիկ:

չաղօտացուցին իրենց յստակ հայեցի բարբառն, և անոնք որ առանց օտար աղբերաց դիմելու՝ կրցան չափաւոր ունով հայկաբանել և յստակախօս ըլլալ:

Բայց Բալուայ գրոյն գլուտին պատմին մեծ գովասանքով կը խօսի թարգմանչաց վրայ, 'ի բաց առեալ զլլատհակ և զՄեսրոպ, որոնց կու տայ միայն աստուածատուր շնորհին (այսինքն գրոց պիւտին) արդիւնքը. իսկ միւսերուն համար կ'ըսէ թէ դառնալով Աթէնքէն՝ ուղղագրեցին նորէն թարգմանեալ գրքերը, « և զամենայն կամ և զսահման հաւատոյ մերոյ մեծապէս պայծառացուցին »: Այս թարգմանչաց մէջ կը յիշուին Մովսէս Խորենացի, « որ ասի թէ քուերորդի էր Մեսրոպայ », Դաւիթ ներգինացի « որ եղև անյաղթ փիլիսոփայ », Եղնակ կողբացի, Մամբրէ վերծանող, Ղազար փարպեցի: Ասոնք, հարկաւ բաց 'ի ծանօթ երկասիրութեանց զոր ունինք այսօր 'ի մեզ, շարագրած պիտի ըլլան կամ թարգմանած ուրիշ մատենաներ ալ, որ մեզի անյիշատակ մնացեր են: Այսպիսի երկասիրութիւն մը, յորում պիտուանէ կը յիշուին Մովսէս և Դաւիթ, հասած է մինչև առ մեզ, և է բազմահոյակ Քերականութիւնն, զոր շատք ևս յետոյ, ինչպէս Ստեփանոս սիւնեցին և Գրիգոր Մազիստրոս, Արիստակէս և Գէորգ զրիչք, և Յոհան երզնկացին կը յիշեն և կը մեկնեն յաւելածովք և զեղչմամբ: Ահա այս քերականութիւնս կու տայ մեզի աւելի լուսաւոր միջոյ մը՝ նկատելու 'ի մտոյ մեր երանաշնորհ թարգմանչաց բազմակատանակ արդիւնքը, զոր պատմութիւնն լուած է: Ինչպէս ամենայն պատմութիւն, ևս առաւել լեզուաց պատմութիւնն շատ և շարունակ յեզրափոխութեանց են. թակայ է. բայց աւելի յեզրափոխ վիճակ մ'ունեցեր է և ունի թերևս ցայսօր, մեր հայկական բարբառն: Թերևս անգատճառ չէր որ միշտ ևս Յոյնս դիմեցին մեր նախնիք հայ լեզուն յստակելու և ճոխացնելու. վասն զի կ'ըսէ դարձեալ նոյն պատմիչն Բալուայ, թէ

առաջին անգամ երբ առ Ս. Մեսրոպ բերուեցան Դանիէլեան նշանագիրքն, « ոչ կարացին հանել 'ի հեգ, քսնդի 'ի հոռոմ լեզուս միայն էր յարմարեալ հայոց բարբառս »: Այս յարմարութիւնս, ինչպէս տեսանք վերջ Տառից կարգաւորութեան մէջ, ալ աւելի յերևան ելաւ թարգմանչաց ժամանակ որոնք հարկաւ քան զմեր ժամանակս շատ գիտուն էին և լեզուին դաղունիքն և բանալիքն ունէին. ասոր համար պէտք է որ մենք ալ ասոնք ըսածները զոնէ կարենանք և ջանանք մեկնել: Բայց մեր վերոյիշեալ քերականքն զրեթէ ամենքն, բաց 'ի թերևս 'ի զրուտիւնէ Արիստակէայ և Գէորգեայ, որոնց գրութիւնն զուտ հայեցի կ'երևին, և այլք ոմանք զոր չիշեցինք, ինչպէս Համամարեւելեան, և այլն, ասոնք ամենքն մէկ բնագրի վրայ շինուած են, բայց ոչ կուրօրէն, այլ ըստ կարելոյն համաձայնեցունել ջանալով երկու լեզուաց կանոններն, այսինքն յունարէնի և հայերէնի. և է այս քերականութիւնս յոյն Դիոնեսիոսի թրակացոյցի կոչուածը: Իսկ այն ամեն մեկնութիւններն՝ զոր Հայ մատենագիրք շարագրած են, ընտիր են և մեր լեզուի սեպհական կանոնաց պատշաճեալ:

Այս Դիոնեսիոսի ով և որ ժամանանակի զրիչ ըլլալն տակաւին անստոյգ է. սակայն մեր մատենագիրք շատ յարգ ստուած են այս անձին՝ յիշելով գովութեամբ իր փոքրիկ, համառօտ բայց ճիշդ և անխալ քերականութիւնը: Նոյն ինքն փարսիկոս 'ի իր յունական մատենագրարանին մէջ միայն անձն կը նշանակէ անստոյգ ըլլալն ցըցունելով, և յետոյ իր քերականութեան յոյն բնագիրը կը գնէ, յորմէ մէկ գըլուխ այսինքն վերջինն, որ կը խօսի զօտոյ ոտանաւորաց՝ կը պակտի. բայց կայ այն ալ 'ի յոյն ձեռագիրս որ 'ի Սուրբ Մարկոսի գրատան վնեետոյ և թերևս ուրիշ կողմեր ալ: Բայց մեր

1 Fabricius. Bibliotheca græca, VII. 24, 25.

մէջ յիշեալ է անոր հայ թարգմանու-
 թիւուն, որ հաւանօրէն կամ Մովսէսի
 խորենացոյ է և կամ Դաւթի անյալ-
 թիւ. բայց անկարծիւ է կարծել որ Ս-
 Մեսրոպայ-Մաշտոցի ըլլայ, որուն հա-
 մար յայտնի կրտսն պատմագիրը թէ
 չէր գիտեր կամ գոնէ շատ քիչ զյոյն
 լեզու, և 'ի դժուարինս առ Ս. Սահակ
 կը դիմէր: Իսկ ուրիշ չափաւոր հին ձե-
 ոագիր մը, որուն գլխէն կ'երևի թէ
 շատ դէպքեր անցած պիտի ըլլան,
 ստէպ գործոյն ընթացքին մէջ կը նշա-
 նակէ հելլեն տառերով սթթ, որ է ան-
 շուշտ Մտեփանոս սինեցին, բայց այս
 ինքնագիր քերականութեանց մասին
 մէջ. Իսկ Դիոնիսեայ քերականութեան
 երբեմն 'ի մերոց նաև Դաւթի Անյաղ-
 թի անունն տրուած է: Միով բանիւ
 հարկ է ընդունինք որ այս անձանցմէ
 մէկն ըլլայ թարգմանն, և աւելի Դա-
 ւիթ անյաղթ, որուն գրուածոց մէջ
 կ'ի կրեկին տեղ տեղ այս քերակա-
 նութեան հետքերն, զոր վերջը պիտի
 տեսնենք, Դարձեալ նոյն քերականու-
 թեան մէջ տեղ մը կը գտնենք յունա-
 գիր մասս, որ է Մովսէսն անշուշտ խո-
 րենացին. բայց ասոնց քերականու-
 թիւնն շատ տեղ իրարու հետ խառն
 են, և երկու անձանցն մէկտեղ միա-
 ցած, Մովսեսի և Մտեփանոսի. և օրի-
 նակներէն շատն ալ յատուածաբա-
 նութենէն է և ոչ 'ի քերականութենէ:
 Բայց Գրիգոր Մագիստրոս իր քերա-
 կանութեան մէջ առաջին անգամ կը
 սկսի խօսիլ Դիոնեսիոսի վրայ, և քե-
 րականութեան ծագումը մինչև 'ի Հո-
 մերոս կը հանէ: Երկար յառաջաբա-
 նութիւն մը գրելէն ետև կ'ըսէ. «Ապա
 Դիոնեսիոս ոմն եկեալ՝ ըստգաւանելով
 զերկրոցնցն զսկզբունսն այսպէս, թէ
 զձայնի բնութիւն գտանել իմաստասի-
 րաց է, և գիրն տեսցի 'ի կարգի իւ-
 բում, զի մի այլ ընդ այլը քննութեամբ
 ծաղր լիցի արուեստն. Իւ իւր սկսեալ՝
 բուռն եհար զնոյն ինքն զիրէս, եթէ
 քերականութիւն է հմտութիւն: Զկնի
 որոյ Հերոզիանոս ոմն օրդի Ապաղի-
 նարի խոհեմագոյն միանգամայն և իշ-

խան, որոյ՝ վասն յոյժ անբաւութեան
 արուեստից, զբարբեց այրելով զգրեան,
 միայն զհօրն իւրոյ եթող զգրեան. ու
 մանք ասն վասն յիշատակի, և ոմանք՝
 վասն առաւել մտաւորութեան: Բայց
 փոքր ինչ այս արուեստ, կամ վասն
 չանկանելոյ 'ի բուռն, և կամ վասն ման-
 գանց կրթութեան մնացեալ՝ Դիոնիւ-
 սիոս ասացեալս: . . . Արդ այս Դիոնե-
 սիոս թրակացի գտեալ զգիրս զայս,
 որպէս վերագոյն ասացաք, սակայն ա-
 նոն և անյամար զնա կարդեալ, մինչև
 յարանանեալ շարագրեաց զաս հան-
 դերձ իւրովն գիտիւք »: Երայիտի
 խօսքեր կը կրկնէ նաև իրմէ վերջ մեր
 Երզնկայեցին իր քերականութեան մէջ:

Ինչպէս կրնան տեսնել ընթերցողք
 բուն քերականութեան մէջ, այս Դիո-
 նիսեայ կոչուած քերականութիւնն
 շատ տեղ դժուարին ճամբաներ առաջ
 նորդած է մեր թարգմանիչներուն և
 մեկնիչներուն, որոնք թերևս հնուա-
 ցեալ քիչ կամ շատ 'ի նախահօրէն լե-
 զուիս 'ի Ս. Սահակայ, և չկարենալով
 կառավարել զիրենք այն բազմակնճիւն
 յոյն լեզուին մէջ, ընկան բոլորովին ա-
 նոր ծոցը իրբև 'ի զիրկա մօր, և հնարե-
 ցին շատ բաներ՝ զոր պիտի չտեսնենք
 և 'ի զուր կը բնառենք Ոսկեղէն դարուն
 մատենագրաց մէջ: Բայց այս փոփո-
 խութիւններն չենք կրնար ըսել թէ
 ինքնածին գիտեր ըլլան, այլ աւելի
 հաւանաբար ներելի ըլլայ մեզի ըսելով՝
 որ ինչ որ լեզուիս արմատոց մէջ կար՝
 զայն ուղեցին սոքա ընդհանրացնել և
 կանոնի առնուլ. բայց փորձը ցըցուց
 որ մի և փոքր զարտուղութիւններն չեն
 կրնար ամեն անգամ ընդհանուր կեր-
 պարան մ'առնուլ: Շատ աւելի ցանկա-
 լի էր ամէն հստասիրաց որ այսօր ունե-
 նայինք այն բազմագիտի բարբառներն,
 զոր Երզնկայեցին անմահաբառեր կը
 համարի լեզուի հմտութեան և ստու-
 գաբանութեան համար: Վասն զի ինչ-
 պէս յունական լեզուն ունէր իր զանա-
 զան բարբառները (dialecte), այսպէս

և ամենայն իր արգել բնական տուրք, ունէր նաև Հայաստան. ասոր և ինքն մեկնիչ քերականին կը վկայէ. և զգործն անուշ զորոյ լեզուիդ գիտեին բառանդակ զբառան եղերական, որպէս զԿործայն և զՏայցեցին, զԽոթայինն և զԶորրորդ հայեցին, և զՂպերայցին և զՂիւնին, և զԱրցախայինն, այլ մի միայն զՄիջերկրեայսն և գոստանիկսն. վասն զի պիտանիք այսոքիկ են ՚ի տաղաչափութեանն, այլ և օգտակարք ՚ի պատմութիւնն, զի մի վրիպեսցի՝ անընդեղ գոյով լեզուացն ։ Ինչ օգուտ այն ամեն շարգիպութիւններէն, զոր մեր առջև կը դնեն քերականք, որոնք երբէք ՚ի գործ պիտոր չգրուին յազգին. Ոմանք կարծեն թէ շատ դիւրին ըլլայ այն լեզուով գրել՝ որով մեր Հարքն գրեր են, և անով իսկ կարենան մտածել. սակայն ամենայն ոք գիտէ թէ ինչ մեծ զանազանութիւն անցած է ընդ Ոսկեղէն դար և ընդ հետեակայն՝ մինչև մեր օրերն. ինչ որ հիմայ կը գրենք՝ ասկէ դար մ՛առաջ նոյն ոճով չէր գրուէր, իսկ երբոր հիմու խօսածներնէս վերցունենք քիչ բան, օրինակ իմն կը մասնիկն, զբարառ մակ բայներ և շարղկապներ և նախադրութիւններ գործածենք, բայերը քիչ խանգարենք և տանք անոնց զբարառ ձևերն, այն լեզուն դուրս կ'ելլէ՝ ինչ որ միջինդարեան հայերն գրեր են, և այն՝ վասն ժողովրդեան. և եթէ անոնց մէջէն ալ կոչ մասնիկն վերցունենք, և բայերու և բառերու հոլովմանց զբարառ բնիկ ձևը տանք, արդեօք ինչ տարբերութիւն կ'ըլլայ Ղազարայ փարպեցւոյ տեղ տեղ գործածած լեզուէն. Այս դիւրինաց և լեզուն և զբարառ շարգիպութեան. բայց այսպիսի վասն զի մենք տեսած ենք մեր լեզուին բնութագրին մէջ թէ քանի անգամ մեծ յեղափոխութիւններ կրած է հայկական բարբառն, և շատ անգամ առ ադիսութեան խանգարեալ. Ասոր համար մեր բազմավաստակ քերականներն յիս կանոնաց քերականին կը յաւելուն փոքրիկ՝ բայց իրաւացի յան.

գիմանութիւն մը, և ձեռագրաց հմուտ օրինակողքն կը պատուիրեն, որ տգէտ անձինք չօրինակին և չքերեն բառ կամ անուն, ըսելով թէ զայս չեմ գիտեր, կամ այս այսպէս չէ. Իւ սակայն անհուն են այս տեսակ ագիտութիւններ, բառերու խառնակ ուղղագրութիւններ, սխալ կէտագրութիւններ, քմահաճոյ յաւելուածներ մեր բազում ձեռագրաց մէջ :

Գառնալով մեր խօսքին նպատակին, ուսկից չեղեցուցին զմեզ ժամանակիս քանի մը կարծիքներն, երեք դիտելու կէտ կ'առնուէր մեզ այս վերոյիշեալ քերականութիւնէն. մէկ մը՝ սեռից զանազանութեան ՚ի հայկական բառաբերկորդ՝ մասնիկներու յաւելուածք, և երրորդ՝ բայից լծորդաբիւնք :

Շատ անգամ ըսած են քերականներն, թէ հայ լեզուն չունի զանազանութիւն սեռից յարական և յիգական իր բառից մէջ. բայց Գիտնիսեան Գե. րականութեան թարգմանողն և բոլոր մեկնիչք կ'ուզեն և կը ջանան նաև յայսմ մասին քերականական զանազանութիւն մը սահմանել նաև ՚ի հայ լեզուիս ։ Գրիգոր Մազիստրոսի հետեւելով այս մասն ալ երեքի կը բաժնենք, սեռ ՚ի վերջառորտքեան, սեռ յարուչ աւելուածն և սեռ հասարակ ւելուածն ։

ա. Այսպիսի յայտնի է ՚ի լեզուէս որ սեռի զանազանութիւն չկայ հայերէն լեզուի մէջ ՚ի վերջառորութիւնս, բայց եթէ երբոր հեղինական ոճով բառ մը մտած ըլլայ ՚ի լեզուիս, ինչպէս Թուռնիայ որ է դուտոր թոռին, միշտ իգական բառ. նոյնպէս և Հանգուտարարիքայք, այսինքն կանայք Հանգուտարարք (որ են տղանդուտորք Հրէից). ասկէ զատ յանգչկայ իգական նշանակող ՚ի հայերէնին՝ ՚ի բառս. Բայց Գրիգոր Մազիստրոս կ'ըսէ. « Ասն ոմանք եթէ ՚ի Հոռոմին ըիով արական և իգական և չեղորական, իւ և կամեցի ոք յայտնել, ըստ երեցունց կարողութիւն է յայտնել. իսկ յաղագս մերոյ լեզուոյ՝ եթէ ոչ է ՚ի սոսա արական և իգական և չեղոր՝ շարագասեալ որպէս ՚ի յունականին. և

յումանց նշանակեալ՝ ունել մեզ : Բայց զայս ոչ իբրև պարսաւանս եղեալ մեզ վարկցիս, զի եւ մեր սովորաբար. զի եւ ոչ առ նոսա է մի արականն և իգականն : Քանզի այսորիկ են արականք յունաց, որք ունին 'ի սկզբունս բանի՝ ով (օ), որպէս ասելն՝ ով այլովս ա. պաշտոտովսառ (օ άγισσ άποστολος), այսինքն՝ ՄԷ առաքեալք, և է արական : Որք միանգամ 'ի սկզբունսն ունին ի, նորա են իգական, և (որք) 'ի սկզբունսն ունին տաւ (տօ), նորա չէզոր են » : Այս չափ յունական կանոնաց համեմատ. ետքը հայերէնի համար կը յաւելու. « իսկ մերս յորժամ ասեմք՝ այս ա. նուն... և ասելն ընդ քեզ եմ, արական է. իսկ ասելն՝ աղեա, լսեա, չէզոր » : Այս խօսքերս աւելի կը ցրցունեն թէ չունինք մեր լեզուին մէջ 'ի վերջաւորութեան ոչ արական և ոչ իգական յանդ :

բ. Բոտ բուն կազմութեան լեզուին նայելով՝ պիտի չունենայինք ուրիշ ազգաց պէս վերջաւորութիւն յատուկ ա. նուանց արականի և իգականի. բայց ընդհակառակն յայսմ ոչ միայն քերականք, այլ և պատմական անուանք հաւաստի վկայութիւն կու տան թէ կայ 'ի յատուկ անուանս վերջաւորութիւն սեռից մեր լեզուի մէջ ալ : Իրանօթ է ամենուն որ ուրնի կամ ունի, անոյշ և դալստ վերջաւորութիւնք յատուկ անուանց՝ իգականաց յատուկ են. բայց մեր քերականքն, չիտեմք ինչ պատճառաւ, դալստ վերջաւորութիւնք՝ չէզորաց է կ'ըսեն. զոր օրինակ Մագիստրոս. « խոսրով՝ արական, խոսրովուհի՝ իգական, խոսրովիզուխա՝ չէզոր » : Իսկ երդնկացին իգականաց վերջ կու տայ ննի, ոյշ, ունի, ոց. զոր օրինակ, վարդենի, Մանանոյշ, Տրդատուհի, վարդոց¹ :

¹ Բայց կայ արական Տիրոց՝ Իշխան Բագրատունեաց, (Ղզր. Փրպ. 195) : Այլ է հայրանունական վերջերն զոր կու տան քերականք, ինչպես են, եսն, էլ, ճիք, գեհ, էն, ակ. Մամեան, Մանուկ, Մանիք, Բար-

դ. Գայով վերջոյն, որ է հասարակ անուանց մէջ սեռ կայ թէ ոչ, կ'ըսէ Մագիստրոս. « իսկ չորրորտանեացդ, ստուգաբար իմացեալ եմք, թէ մերոյս և նշանակութիւն արականաց և իգականաց և չէզորաց, յոգնագոյն է քան զՅունացն » : Եւ հօս իրաւացի գանգաւտանաց ժամ է ընդդէմայն թարգմանչաց, որ չիտեմք որ ազատութեամբ ամենայն անուն անխտիր կը գործածեն, չնայելով որ գունէ սովորական բառից մէջ կայ զանազանութիւն սեռից. բայց ե ոչ ալ ամեն ըսածնեբր. նուն հաւատալ կը բռնադատինք, մանաւանդ երբ տեսնենք բազդատութեամբ գրոց՝ որ նոյն իսկ նախնիք յիւրեանս անհամաձայն են այդ տեսակ բառից թարգմանութեան մէջ : Եւ ահա տեսնենք Գրիգորի Մագիստրոսի բաժանմունքը, որուն հետ և երդնկացոյն խառն է :

Արական 'ի վերայ հօտից ասացեալ. Անն, խոյ, գոնչակ, վիզոն, զուար, մալ :

Չորրորտանեաց վայրենեաց անուանեալ է սեռաբար, երկ, իսկ յատուկ 'ի նոցունց՝ շիկերես :

Չէզոր՝ մանուկ, զաւակ, փրզունդ, ժառանգորդ, հարազատ :

Մըլտոց իգականք՝ կով, եղն, երինջ. չէզոր՝ մոզի :

Չիոց իգականք՝ մատեան, զամբիկ, ճայիկ, ճակ. չէզոր՝ բուռակ, բաշա, հատ, մատաղածի, խեշակ, զգի, բուշոյ կամ բուշոյ, անդրափար, փալանիկ :

Այժից արականք՝ քոյ, քաղ, նսխազ, բզաք :

Չիոց արականք՝ յովտակ, նժոյգ, փահլ, երիւար, գեղազատ :

Արու արժուի՝ կանդ :

գեհ (որպէս Թէ Բարեան), Մանեձ, Արտակ, Այսեհ (եհ կամ են վերջն անուանոյն համարուի ընդ եսն վերջոյն), ինչպէս նաև այձ ընդ էձ, զոր օրինակ Մանայձ, զոր Գորգոյսից յատկական դադապար կ'ըսէ : և Երզնկացին զԳորգոյսից հնչումն կը նմանցունէ յոյն Գորացի հնչման :

Արու բազէ՛ ճուրակ .

Իգականը՛ մարի, որով, այծ, թա-
լասանդ . չէզոր՛ արով, բուծ :

Այս բնական զանազանութիւնն է,
զոր կը պատմեն մեր քերականը, հե-
տևելով նաև յայսմ՝ Դիոնիսեայ քերա-
կանութեան, զոր ընթերցողք կրնան
տեսնալ ՚ի բուն քերականութեանն :

Իսկ մասնիկներ ըսելով կ'իմանանք
այն բառերն՝ որ միայն յածանցս գործ-
ածելով լեզուի մէջ մտած են, բայց
թէ որն է իրենց ծագումն՝ այդ մեզի
անզիտելի է : Ահա այս մասնիկներն են՝
որ կրնանք ըսել գրեթէ բառարանաց
երրորդ մասը բունած են, հարստութի՛
մը՝ որուն կարծենք թէ գլխաւոր հեղի-
նակ եղած են այդ քերականութեան
թարգմանողներն : Դիոնիսիոս Թրակա-
ցին խօսելով նախադրութեանց վրայ՝
կը դնէ թուով մը յոյն նախադրու-
թիւններ, որուն համաձայնը պէտք էր
որ գտնէին նաև մեր ճարտար թարգմա-
նողք ալ . և իրացընէ գտած ալ են, զո-
րոնք կը տեսնենք միշտ իրենցմէ վերջը
ի գործածութեան հայկական թարգ-
մանութեանց մէջ, մանաւանդ հեղե-
նաբանից մէջ . և զորոնք պէտք է գիտ-
նալ ճամբարիտ հասկերնալու համար այդ
բառից նշանակութիւնը . վասն զի դի-
տուած բան է որ միշտ մեր հեղեմա-
բան գրիչները մթաղնողներն այդ ա-
ծանցներն են կամ մասնիկներն, որ թէ
պէտ ճշդիւ ՚ի հայ թարգմանուած են,
սակայն այդ բարդութիւնը կամ բար-
դած բառը կամ բայը տարբեր նշանա-
կութիւն ունի իր պարզէն : Ահա վեր
ի վերանց այս համաձայնութեանց
կերպն .

- έν - ե, եեր .
- εις - եեր . եերքս .
- էջ - արտ .
- προ - նախ, առաջ .
- πρόσ - առ .
- σύν - շող, շար, փաղ .
- ανά - վեր .
- κατά - բառ . (κατηγορία, ստորագու-
թիւն) . ստար .

- διά - տար .
- μετα - փոխ .
- παρά - շար .
- άντι - փոխ, հակ .
- έπι - մակ .
- περί - պար, շարք .
- άμφι - շուրջ, բակ, քող .
- άπό - ապ, յաց .
- ύπο - եեր, ընդ .
- ύπερ - գեր .

Այս մասնիկներով ձևացած են շատ
բառք, որոնց կազմութիւնն հեղեմացի
է և օտար յոսկեղէն գարուն գրչէն .
ինչպէս, վերջաւանաբիւն (άναγνωστος) որ
ըսել է ընթերցումն . Մակագոռաբիւն
մակ-կացութիւն (έπιστήμη) այսինքն գի-
տութիւն, և այլն և այլն :

Իսկ բայից լծորդութեան և բառից
հորովման նկատմամբ ալ ուզեցին փո-
փոխութիւն մտցունել այս գրոյս թարգ-
մանից, յայսմ ալ հեղեմացներով ըզ-
Հայն, և մինչև ասոնց գործածութիւնն
ալ յայտնի շատ տեղ կ'երևի ՚ի զիրս
կամ աւելի ճշդիւ խօսելով ՚ի թարգ-
մանութիւնս Դաւթի Այսաղթի, Բաց ՚ի
նորամուտ հորովներէ և ժամանակներէ
բայից, զոր կրնայ տեսնել ընթերցողն
յընդարձակ լծորդութեան կոփեմ բա-
յին, զոր շատ քերականք հասուցած
են մեզի՝ որոնք համառօտելով, այլք
ընդարձակելով, ուզած են նաև նիւ-
թական կազմութեամբ ալ նմացնել
զհայերէնն յունարէնի, օրինակ իմն է
տառն աւելցնել բայերուն քանի մը
ժամանակաց վրայ, որ արդէն կը տես-
նուի նոյն կոփեմ բային մէջ : Օրինակ
իմն . կը կարդանք Դաւթի գրոց մէջ
« Գանգի կենդանոջն տարբերութիւն
առեակեալ բանականին՝ այլ էարար .
տեսակ մարդոյ կենդանոյ էարար . .
Իսկ ապա մին՝ այլ, իսկ միւսն՝ այլայ-
լակ միայն էարար » . ուր էարարն մէկ
տեղ գրուելով պիտու կարգացուի, և
ըսել է՝ արար : Այսպէս նաև իրենց
գիւտն եղաւ նորօրինակ սեռական հո-
լով մ'ալ լեզուին մէջ մտցունել, որ չէր

յունական, այլ թերևս հին հայկական տառ մը ըլլար, ր գիրն, որ ցարդ կը տեսնուի գերանուանց մէջ, և զայն ր տառն անցունել ուզեցին նաև ուրիշ բառերու վրայ ալ . ինչպէս կ'ըսէր նոյն Գաւիթն Անյաղթ¹ .

«Բացատուեցելոյր սեռոյրն և տեսաւ կոյրն՝ զինչ երկաքանչիւրն, սեռոյր եւ զոյր ելոյր, և տեսակացն յոլովից» . ուրուն իմաստն է՝ բացատրելով զսեռ և զտեսակ՝ թէ զինչ է երկաքանչիւրն . և սեռն եզ (այսինքն մի) գոլով և տեսակքն յոլովք ր Գարձեալ կ'ըսէ նոյն հայ Գաւիթն . «Ելոյր հարկաւորի, քրիսաւորիէ» . այսինքն, քանզի հարկաւոր է (հարկաւորի եղելոյ), ո՛վ քրիստաւորիէ : Այսպէս կը հոլովեն զսեռականն ձիոյր (ձիոյ), իշրաքանչիւրոյր (եր-

կաքանչիւրոյ), Մանկան ելոյր և այրացելոյր և ներգործելոյր ինչ կամ դադարելոյր . այսինքն, մանուկ գոլով և յարրուն հասեալ և գործելով ինչ կամ դադարելով . այլոյր (այլոյ), մարդոյր (մարդոյ), միոյր միայնոյր (միոյ միայնոյ), և որ բառ կարգի : Բայց դիտելի բան մը եթէ կայ այս հրեշաւոր հոլովներու մէջ, այն է որ միշտ ր գիրն այն բառերու վրայ կը դրուի՝ որոնց սեռականն ոչ կամ տոյ կը վերջանայ :

Ահա այս է համառօտիւ մեր լեզուին նախնական քալափոխից տարբերքն կամ յեղափոխութիւնքն՝ զոր կրեր է մերթ յաճող և մերթ անյաճող բազում . և շատ բան ալ կը սովորեցնէ նոյն փերականութիւնն, զոր աւելորդ համարեցանք կրկնել . որպէս զի ո՛վ որ հաճի և հետաքրքրէ՝ կարենայ բնիկ օրինակին վրայ կարդալ այն մեծաւ մասամբ շարժաղփութիւնքն, որուն քան զայս աւելի անուն մը չենք կարող տալ, թէպէտ կը ճանչնանք և ճարտար և անուանի հեղինակի մը ձեռք, որուն համար ըսած է փոքրիկ պատմութիւն մը . «Կարող էր և բազմաց աստուածատուր իմաստիցն, զի զքնականն և զչնորհականն քաջ ունէր զատ յուսմանէն, այլ վասն անիշխանութեան և ազգիս անընդելութեան խափան եղև» . և է այս՝ ինքն Անյաղթն Գաւիթ, մեծ հելլենագէտն և հայահմուտն :

Հ. Ա. ՍՈՒՐԵՅԱՆ

¹ Գաւիթ Անյաղթ . ներածութիւն Պորփիրի : Բայց սոյն Գաւիթ Անյաղթ իր մասբուր հայկաբանութեան մէջ ալ ըսած է . «Ոչ այլ ինչ խոկալով, քան զմեռանելն . և բարւոք առկայանան երկօքեան՝ մեռանելն և էմեռանելն» . (Սահմ. պրակ Ը . էջ 160) . ուզելով իմացնել այն բարակ զանազանութիւնն՝ զոր կը դնէ Պղատոն ՚ի տրամախօսութեան Փեդոնի այս յոյն կերպին բառից մէջ, ἀποθνήσκειν καὶ τεθνᾶναι, որոց առաջինն կը նշանակէ՝ մեռանել, և երկրորդ՝ մեռեալ գոլ (այխարհի, և այլն) . ըստ իմաստասիրաց ըսելուն՝ խոկումն մահու, ինչպէս կը սահմանէին մարդուս կեանքը : Եւ այս և տառն ինքնահնար չէր, այլ կար և կայ ալ բայերուն կատարելային երրորդ գէմբին վրայ, ինչպէս, եօծ, եհար և այլն . նմանապէս ր տառն ալ կը տեսուի գերանուանց սեռականներուն վրայ, սորս, սյար, և այլն և այլն :

